## 12. ԹԱ ՀՈՒՆՑ ԸՐԾԱԹԵ ՂԱՄԱՆ ՓԱԴ ՏԸՆԵՌԱՎ

Մին օր Շահ-Աբբասը շորերը փոխած տո̈ւս ա կյամ, վըեր ծ̈իրան երգյիրը շոռ կյա, տըեսնա ժողովուրթը հո՞ւնց ըն ապրում, հի՞նչ ըն անում, հո՞ւնց ըն յոլլա քյինամ։ Քյինամ ա տըեսնում քըղաքըեն ղրաղեն մին քյա̈սիբ տան մին մարթ, մինգյել մին կնեգյ ծ̈իրա̈նց խուփոցը նըհետ նըստած քյեփ ըն անում։

Էքյսի ծ̈իրո̈նգյո̈ւնն էլ ա տըեղավ անց կենում, տըեսնում էլլա քյեփ ընելիս։

Մին քանի օր ծ̈իրո̈նգյո̈ւնենեն միշտ տըեղավ անց ա կենում, տըեսնում տահանց տանը միշտ քյեփ։ Հըրըվըններան-պըննան հըրցըփորց ա անում, թա տահանք հինչավ ը՞ն խոփ միշտ քյեփ անում, հըրըվաներն ասում ըն.—Մարթը վըեչ մին տըեղ ըխշաղում չի, ամմըեն օր քյինամ ա մին-էրկու ղուշ վըեր քցո̈ւմ, տանում ծախում, մին մանեթ փող ինքյ օնում, բըզարան տեսա̈տենա ինքյ օնում, ծ̈իրո̈նգյո̈ւնը պիրում կնգանը, խուփոցը նհետ նըստում, քյեփ անում։ Շահ-Աբբասը մտկումն ասում ա.—Հունց ըննական ըմ, վըեր էտ մարթին ծըեռքը մին քանի օր փող չինգյի, տըեսնամ հի՞նչ ա անում։ Տրան ծեն ա տամ ծ̈իրա̈ն պալատը, շորս դուսաղ տամ ծ̈իրա̈ն, մին ըրծաթե ղամա յել կապել տամ, թա էտ դուսըղներեն յիրա սաղ օրը ղարաղոլ պիտի անըես, վըեչ մին տըեղ էլ պիտի քյինա̈ս վո̈ւչ։

Էն մարթը մին սաղ օր դուշըղներեն յիրա վըրենն ա կենում, եռնան տըեսնում մին դո՛ւլգյա՛ր հիչըրթնըեն եր կալած քյինամ ա տո՛ն։ Էն դո՛ւլգյա՛րին ծեն ա տամ, թա ինձեռե մին փադի ղա՛մա՛ շինի, էս ըրծաթեն ղա՛մա՛ն եր կալ, մին մանեթ փող տար մըեր տոն, տոնըս էսհինչ տըեղն ա։ Դո՛ւլգյա՛րն ուրխացած դա՛ստին ղաման շինո՛ւմ ա, տամ ո՛ւրա՛ն, ըրծաթեն ղա՛մա՛ն յոր օնում, մի մանեթ փող տանում տամ տըրա կնգանը։ Շահ-Աբբասն էն ո՛ւրո՛ւգյո՛ւնը շորերը փոխած, էլլա տահանց տանը քշտավն անց ա կենում, տըեսնում դո՛ւլգյա՛րին կնեգյը խուխոցը նըհեռ նստած, քյեփ ա անում։ Քյինամ ա պալատը, էգյսի օրն էն մարթին ասում.—Գիտի քու ծըեռքեռ ղիմավը էն դուշըղնըերեն կտորես։ Տա թա՝ շահն ապրած կենա, վըեր ինձ թիքյը-թիքյա՛ էլ անըես, ես հա՛լա՛ մարթ ըսպանած չըմ, կարել չըմ, համ էլ տահանք մեխկու տար չըն, ծըեռքըս պատ չի կյա՛լ։ Շահ-Աբբասը թա՝ տու վըս դյո՛ւդո՛ւմ, յա տահանց պիտի կտորես, յա էլ քու կլըխըտ ըմ կտրել տըլլական։ Էն մարթն ասում ա.—Դե վըեր իտի յա, եշինքյ տըեսնանք, թա ղա՛մա՛ս արծաթ մնաց, գյիդա՛ վըեր էն մարթիքյը մեխկու տար ըն, էն վախտը ես տահանց կըսպընոտեմ, թե վըեր փադ տըեռավ, գյիդա՛ վըեր էն մարթիքյը մեխկ չօնըեն, տըրանա եռը տու վըս դյո՛ւդո՛ւմ։ Տա ծըեռքը տանում ա քիդի ղորո՛իրը, ղա՛մա՛ն տո՛ւս օնում, տըեսնում ափադ տըեռածա։ Շահ-Աբբասը մնում ա տըեղը քար կտրած, դուշըղներեն պեց ա թողում, էն մարթին էլ լա՛վ վըեսկավ, խըղնավ, խըլըթներեավ դարկում ո՛ւրա՛նց տոն, թա՝ դե վըեր իտի պարի մարթ ըս, քյինա ամըեն օր քյեփ ըրա։